Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 16.03.2021թ. թիվ 2112405190 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<02>> 04 2021թ. 7-13 56 00 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Տիգրան Զատիկյանի ՄԴ/26018-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Բաղյան փողոցի 9 շենքի 20 բնակարանի բնակիչ Տիգրան Զատիկյանը դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112405190 որոշմանը՝ նշելով, որ խաչմերուկ է մուտք գործել լուսացույցի դեղին ազդանշանի առկայությամբ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վերը նշված որոշումը ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին, իսկ նույն որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետի՝ լուսացույցի կարմիր ազդանշանն, այդ թվում նաև՝ թարթող, արգելում է երթևեկությունը: Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի «Կանգ-գիծ» գծանշման (կամ 6.16՝ «Կանգ-գիծ» նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար, ինչպես նաև այլ վայրում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:

Իրավախախտման փաստը հավաստող տեսանյութի դրվագային և դանդաղեցրած ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ 23.02.2021թ-ին ժամը 12:04-ին Երևան քաղաքի Խանջյան-Տիգրան Մեծ փողոցների խաչմերուկի հատվածում՝ իրավախախտումն արձանագրած վայրում առկա է <<Կանգ-գիծ>> գծանշումը և դիմումատուի կողմից այն հատելու պահին միացված է եղել լուսացույցի կարմիր արգելող ազդանշանը:

Այսպես՝ տեսանյութի 12:04:01-րդ վայրկյանին միանում է լուսացույցի դեղին ազդանշանը, իսկ 12:04:04-րդ վայրկյանին՝ միանում է լուսացույցի կարմիր ազդանշանը, երբ դիմումատուի տրանսպորտային միջոցը գտնվում էր <<Կանգ-գիծ>> գծանշման առջև: Դիմումատուի տրանսպորտային միջոցը <<Կանգ-գիծ>> գծանշումը հատում է տեսանյութի 12:04:05-րդ վայրկյանին, երբ շարունակվում էր միացված մնալ լուսացույցի կարմիր արգելող ազդանշանը:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազմը, ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 16.03.2021թ. թիվ 2112405190 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Տիգրան Զատիկյանին :

Կատարող՝ Աեղիազարյան
Հեռ. 011-544-978

Ե.Կարապետյան